

ՍՈՎԵՏԱ-ԹՅՈՒՐԲԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Ս. թ. մայիսի 30-ին ՍՍՌՄ Արտաքին Գործերի Մինիստր Վ. Մ. Մոլոտովը Թյուրքական Ռեսպուբլիկայի Դեսպան պ-րն Խոզարին արեց հայտարարություն հետևյալ բովանդակությամբ.

«Սովետական Կառավարությունը, վերջին ժամանակներս զբաղվելով հարևան պետությունների հետ ՍՍՌՄ հարաբերությունների հարցերով, այլ հարցերի թվում ուշադրություն դարձրեց նաև սովետա-թյուրքական հարաբերությունների դրության վրա:

Ինչպես հայտնի է, 1925 թվականի սովետա-թյուրքական պայմանագրի ժամկետը լրանալու կապակցությամբ, սովետա-թյուրքական հարաբերությունների կտրգավորման հարցը շոշափելի է մի քանի տարի սրանից առաջ՝ երկու պետությունների ներկայացուցիչների պաշտոնական գրույցներում: Այդ գրույցներում շոշափվում էին Հայկական ՍՍՌ և Վրացական ՍՍՌ որոշ տերիտորիայ պահանջները Թյուրքիայի նկատմամբ, ինչպես նաև Սովետական Կառավարության նկատմամբ ներդրված նեղուցների կողմից ՍՍՌՄ անվտանգությանը հնարավոր սպառնալիքի վերացման վերաբերյալ: Թյուրքիայի կառավարական և հասարակական շրջանների կողմից այդ բանն ընդունվեց հիվանդագին կերպով, մի բան, որ չէր կարող որոշ չափով շանդրագառնալ սովետա-թյուրքական հարաբերությունների վրա:

Հանուն բարդ-դրացիական հարաբերությունների պահպանման և խաղաղության ու անվտանգության ամրապնդման, Հայաստանի և Վրաստանի կառավարությունները հնարավոր համարեցին հրաժարվել Թյուրքիայի նրկատմամբ իրենց տերիտորիայ պահանջներից: Իսկ ինչ վերաբերում է նեղուցների հարցին, այսպ Սովետական Կառավարությունը վերանայեց այդ հարցի վերաբերյալ իր նախկին կարծիքը և նեղուցների կողմից ՍՍՌՄ անվտանգության ապահովումը հնարավոր է համարում ինչպես ՍՍՌՄ, այնպես էլ Թյուրքիայի համար միատեսակ ընդունելի պայմաններով:

Այդպիսով, Սովետական Կառավարությունը

հայտարարում է, որ Սովետական Միությունը ոչ մի տերիտորիայ պահանջ չունի Թյուրքիայից»:

Ս. թ. հուլիսի 18-ին Թյուրքական դեսպան պ-րն Խոզարր արեցից ՍՍՌՄ Արտաքին Գործերի Մինիստր Վ. Մ. Մոլոտովին և Թյուրքական Կառավարության անունից նրան արեց հետևյալ հայտարարությունը.

«Թյուրքական Ռեսպուբլիկայի Կառավարությունը ծանոթացավ այն հայտարարության տեքստին, որ 1953 թվականի մայիսի 30-ին Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության Արտաքին Գործերի Մինիստր նորին զերազանցություն պ-րն Մոլոտովը կարգաց և Մոսկվայում Թյուրքիայի Դեսպանին հանձնեց, որը ատում է հետևյալը. (Ախուհետև լիովին վերարտագրվում է Սովետական Կառավարության վերոհիշյալ հայտարարությունը): Այս Թյուրքիայի Կառավարության հայտարարության մեջ ասվում է.

«Թյուրքական Ռեսպուբլիկայի Կառավարությունը գոհունակությամբ ընդունում է ի գիտություն այն հայտարարությունը, որով Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության Կառավարությունը հայտարարում է, որ ՍՍՌՄ ոչ մի տերիտորիայ պահանջ չունի Թյուրքիայի նկատմամբ:

Թյուրքական Ռեսպուբլիկայի Կառավարությունը հայտարարում է, որ հողատարությունը բարդ-դրացիական հարաբերությունների պահպանման և խաղաղության ու անվտանգության ամրապնդման մասին, որի նկատմամբ վկայակոչում է արվում այդ հայտարարության մեջ, ամբողջովին համապատասխանում է այն հողատարությունը, որ միշտ ցուցաբերել է և կցուցաբերի Թյուրքիան:

Ռեսպուբլիկայի Կառավարությունը անհրաժեշտ է համարում այդ կապակցությամբ ընդգծել, որ Սևծովյան նեղուցների հարցը, ինչպես, ի դեպ, այդ հայտնի է Սովետական Կառավարությանը, կարգավորվում է Մոսկոյի Կոնվենցիայի դրույթներով»: